

## ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐՂՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԺՈՂՈՎ

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու հերթական հանդիպում-ժողովը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 7 Փետրուար, 2006-ին, առաւօտեան ժամը 11:30-ին, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, Օրէնճ Քաունթի:

Արեւագալի կարճ արարողութեամբ սկիզբ առած ժողովին կը մասնակցէին Էջմիածնական Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ղրպտի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ՝ Գերշ. Սրապիոն Եպս., իսկ Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդը Գերշ. Կղեմէս Գափլան, ժողովէն բնաւոր պատճառաւ կը բացակայէր: Ներկայ էին նաեւ Գերպ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, Գերպ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Տեր Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեան, Տեր Մուշեղ Ա. Քհնյ. Թաշճեան, Տեր Հրանդ Քհնյ. Երեցեան, Տեր Ռազմիկ Քհնյ. Խաչատուրեան, Հայր Աթանասիոս Ռադէպ, Հայր Անտոն Աթալլահ եւ Հայր Ճորճ Թումա:

Եղբայրական եւ սիրոյ մթնոլորտի մէջ գումարուած այս ժողովը, վերահաստատելով Ամերիկայի Արեւմտեան ցամաքամասի Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու եւ առաջնորդներու միջեւ գոյ քրիստոնէական սիրով համագործակցութիւնը՝ յառաջիկայ ամիսներու համար ծրագրեց հետեւեալ աշխատանքները իրականացել.-

Եղբայրական եւ սիրոյ մթնոլորտի մէջ գումարուած այս ժողովը, վերահաստատելով Ամերիկայի Արեւմտեան ցամաքամասի Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու եւ առաջնորդներու միջեւ գոյ քրիստոնէական սիրով համագործակցութիւնը՝ յառաջիկայ ամիսներու համար ծրագրեց հետեւեալ աշխատանքները իրականացել.-

ա.- Կիրակնօրեայ վարժարաններու 12-15 տարիքի յատուկ Ս. Գրային եւ կրօնական նիւթերու աշակերտական զարգացման մրցանք:

բ.- Միջ-թեմական Ուղղափառ երիտասարդական միութիւններու կրօնա-դաստիարակչական ծրագրով եռօրեայ ճամբար:

գ.- Եկեղեցականաց միացեալ Ս. Պատարագ եւ համագումար:

Ժողովի աւարտին Ս. Քառասնից Մանկանց հիւրընկալ եկեղեցին, ժողովականները հիւրասիրեց ճաշով:

## MEETING OF EASTERN ORTHODOX CHURCH LEADERS

On Tuesday February 7, at 11:30 a.m., the leaders of the Eastern Orthodox Churches in Western United States held their meeting at Forty Martyrs Armenian Apostolic Church in Orange County.

Participating in the meeting were His Eminence Archbishop Hovnan Derderian, Primate, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate,

and His Grace Bishop Serapion, Prelate of the Coptic Orthodox Church. H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan of the Syriac Orthodox Church was not in attendance. Also present were Very Rev. Fr. Dajad Yardemian, Very Rev. Fr. Muron Aznikian, Rev. Fr. Arshag Khatchadourian, Rev. Fr. Moushegh Tashjian, Rev. Fr. Hrant Yeretjian, Rev. Fr. Razmig Khatchadourian, Fr. Athanasius Ragheb, Fr. Antony Atallah, and Fr. George Touma.

During the meeting, the already existing cooperation and collaboration between the Eastern Orthodox Churches and Prelates of the Western United States was reaffirmed and an agenda was also set for the coming months including the following events:

- a. A competition among 12-15 year old Sunday School students on religious subjects.
- b. An inter-diocesan three-day religious retreat for Orthodox Youth Group members.
- c. Joint clergy Holy Mass and conference.

At the conclusion of the meeting, the Forty Martyrs Church hosted the participant for lunch.